Հաշվետվություն

2024 թվականի հոկտեմբերի 14-ից 18-ը Չեխիայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը**
   Սոնա Հայրապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային /կապիտալ/ ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Չեխիայի Հանրապետություն (ք. Պրահա և Բռնո), 2024 թ. հոկտեմբերի 14-ից 18-ը:

4. **Հրավիրող կողմը**
   Հայաստանի Հանրապետությունում Չեխիայի Հանրապետության դեսպանություն՝ Չեխիայի Հանրապետության առևտրի և արդյունաբերության նախարարության հետ համատեղ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**
   Մասնակցել թափոնների կառավարման ոլորտում ճանաչողական այցին

6. **Քննարկված թեմաները**
   Այցի ընթացքում քննարկվել են թափոնների կառավարման մի շարք խնդիրներ, այդ թվում՝ սկզբնաղբյուրից թափոնների տեսակավորված հավաքման և/կամ երկրորդային տեսակավորման, վերամշակման և վերջիններս խթանելու համար արտադրողի ընդլայնված պատասխանատվության ու դեպոզիտի համակարգերի ներդրման դժվարություններն ու առավելությունները, այդ ուղղությամբ օրենսդրական կարգավորումները, իրավաբանական անձանցից թափոնների առանձին տեսակների հավաքման և գործածության արդյունավետությունը, թափոնների այրման, օրգանական թափոնների գործածության՝ հիմնականում կենսագազի ստացման, աղբավայրերի շահագործման խնդիրները:
   Քննարկվել են նաև ԵՄ համապատասխան դիրեկտիվներով սահմանված պահանջների և չեխական օրենսդրության համապատասխանեցման խնդիրները և այլ հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**
   Այցի ընթացքում հանդիպում է անցկացվել Չեխիայի Հանրապետության առևտրի և արդյունաբերության նախարարությունում՝ նախարարության ներկայացուցիչների և ՀՀ-ում ՉՀ դեսպանի հետ, հանդիպումներ են տեղի ունեցել Չեխիայի Հանրապետության խոշորագույն՝ Պրահա և Բռնո քաղաքներում և հարակից

բնակավայրերում թափոնների կառավարման ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, մասնավորապես, քննարկումներ են տեղի ունեցել IVP փոխաբեռնման կայանում, Mostek Energo ինսիներացիոն կայանում, էլեկտրական գեներատորների, կենսագազի արտադրության սարքավորումների հավաքմամբ զբաղվող Tedom գործարանում, Բռնոյի թափոնների կառավարման օպերատոր հանդիսացող Sako Brno կազմակերպությունում, ինչպես նաև իրավաբանական անձանցից թափոնների տեսակավորված հավաքմամբ և մշակմամբ զբաղվող Recovera by Veolia կազմակերպությունում:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել քննարկել վերը նշված կազմակերպությունների հետ հետագա համագործակցության կարիքները և հնարավորությունները:

Ընդունված որոշումներ և ստորագրված փաստաթղթեր չկան:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Առաջարկվել է աշխատանքներ տանել վերը նշված պայմանավորվածությունների իրականացման, անհրաժեշտության դեպքում չեխական լավագույն փորձի տեղայնացման նպատակով կապեր հաստատելու ուղղությամբ:

Ստորագրություն, ամսաթիվ

25.10.2024թ.